ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ IRZ-Ի ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ «ՓԱՍՏԱԲԱՆԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ

20.08.2020 10:43

Հարգելի՝ փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հետ համատեղ կազմակերպում է փաստաբանների վերապատրաստման առցանց դասընթաց՝ ***«Փաստաբանը և հանրային կապերը»*** թեմայով:

Վերապատրաստման դասընթացի շրջանակներում զեկույցներով հանդես են գալու **գերմանացի փորձագետներ՝** ***փաստաբան և լրագրող Ուլրիխ Հերմանսկին*** և ***փաստաբան դոկտոր Ստեֆանի Քունցը***, ինչպես նաև ***ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանը***:

Դասընթացը կազմակերպվում է երկու անգամ (նույն օրակարգը 2 օր)՝ 2020 թվականի օգոստոսի 24-ին և 25-ին, ժամը 11:30-ից 16:30-ն:

Դասընթացն անցկացվելու է վերապատրաստման հատուկ առցանց համակարգով՝ հայերեն և գերմաներեն լեզուների համաժամանակյա թարգմանությամբ:

Դասընթացին մասնակցությունը յուրաքանչյուր փաստաբանի համար կհաշվարկվի 8 (ութ) ակադեմիական ժամ վերապատրաստում:

Դասընթացի յուրաքանչյուր օրվան (24.08.2020թ. և 25.08.2020թ.) կարող են մասնակցել **ոչ ավել, քան 40 (քառասուն) փաստաբան:** Նախապատվությունը կտրվի դասընթացին ավելի վաղ գրացված փաստաբաններին: Դասընթացին գրանցվելու համար կարող եք էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկել **ani.gharibyan@advocates.am էլ. հասցեին՝** նշելով Ձեր անունը, ազգանունը, արտոնագրի համարը և դասընթացի օրը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ԳՐԱՆՑՎԵԼ, ԵԹԵ ՎՍՏԱՀ ԵՔ, ՈՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԴՐԱՆ ԺԱՄԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԱՄԲՈՂՋ ԾԱՎԱԼՈՎ:

Առդիր՝ դասընթացի օրակարգը

Առաջարկվող նորություններ

21.01.2016ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ

05.09.2016
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

05.09.2016
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

05.09.2016
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })